ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՆՈՐ «ՕՄԲՈՒՀԻՆՉ» Է ԸՆՏՐՎԵԼ

Ղարաբաղում շատերն են կարծում, որ նորընտիր օմբուդսմենի անունը շատերի համար այդպես էլ անհայտ կմնա, ինչպես տասնյակ նախարարների անունները: «Օմբուհինչը՞: Էդ հի՞նչ թազա պաշտոն ա, գյուղում չում: Բոլա լի, առաջ ռուսերենը իլալ խոսելիս, մինգել անգլերենն ա՞ մոդա»,- ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի ընտրության մեջ իր իրավունքների խախտում նկատելով՝ ասաց թոշակառու Արշավիր Գրիգորյանը՝ կարգադրելով նախ թարգմանել օմբուդսմեն տերմինը մեկ բառով եւ, հետո՝ խոսել պաշտոնի նշանակության մասին:

Մասնագիտությամբ հաշվապահ Արտակ Վարդանյանը գիտի, թե ինչ ասել է օմբուդսմեն եւ կարծում է, որ այդ պաշտոնյան պետք է լինի ոչ տեղացի, սկզբունքային մի անձնավորություն. «Պատգամավորը ո՞նց կարող ա պայքարի իր օլիգարխ ընկերների դեմ, որոնք, օրինակ, աշխատավարձ չեն տալիս աշխատողներին»: Լրագրող Նաիրա Հայրումյանը նույնպես կարծում է, որ Ղարաբաղում ստեղծված քաղաքական պայմաններում ով էլ լինի օմբուդսմենը, չի կարող անկախ գործել. «Բայց, մյուս կողմից, ընտրյալը քննարկվող թեկնածուներից ամենահաջող ընտրությունն է պրոֆեսիոնալ առումով, հատկապես, որ վերջին շրջանում պրոֆեսիոնալիզմը Ղարաբաղում պակասում է»,- պարզաբանել է «KarabakhOpen» էլեկտրոնային թերթի խմբագիրը:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ ԼՂՀ խորհրդարանի գաղտնի քվեարկությամբ օմբուդսմեն էր ընտրվել արդեն երկրորդ անգամ ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնն զբաղեցնող Յուրի Հայրապետյանը: ԼՂՀ 53-ամյա օմբուդսմենը կուսակցական է, մասնագիտությամբ իրավաբան եւ երկար տարիներ զբաղեցրել է տարբեր բարձրաստիճան մասնագիտական պաշտոններ: ԼՂՀ մարդու իրավունքների առաջին պաշտպանն իր առաջին հարցազրույցը սկսեց՝ խախտելով լրագրողիս իրավունքները՝ թույլ չտալով միացնել ձայնագրիչը:

Իմ դժգոհությանը նա ընդառաջեց միայն՝ իր ասելիքը շատ դանդաղ թելադրելով:

Ստորեւ ներկայացնում ենք օմբուդսմենի առաջին հարցազրույցը, որում նա այդպես էլ որեւէ կոնկրետ ու համարձակ պատասխան չհնչեցրեց:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր պետք ԼՂՀ-ում օմբուդսմենի պաշտոնը:

- Մեր պետության համար մարդու իրավունքների եւ նրա հիմնարար ազատությունների պաշտպանությունը գլխավոր գործառույթներից մեկն է, որը գրված է ԼՂՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում: Մարդու իրավունքների պաշտպանությունը մինչեւ օմբուդսմենը կատարում էին իրավապահ մարմինները: Օմբուդսմենի անհրաժեշտությունը բխում է մեր Սահմանադրությունից: Պարզապես այս ինստիտուտը ստեղծելով՝ իրականացրել ենք սահմանադրական պահանջը:

- Ո՞ր խնդիրները հատկապես կառանձնացնեիք, որոնք այդ պաշտոնին է վերապահված լուծել:

- Օմբուդսմենի ինստիտուտը կարգավորվում է թե Սահմանադրությամբ եւ թե մարդու իրավունքների պաշտպանության օրենքով: Օմբուդսմենն իր լիազորությունները կատարելիս ղեկավարվում է ոչ թե իր կամ մեկ ուրիշի ցանկությամբ, այլ՝ օրենքով:

- Ձեր կուսակցությունը խորհրդարանում ամենախոշոր խմբակցությունն ունի: Ինչպե՞ս եք փորձելու իշխանությունից անկախ գործել:

- Ոչ թե փորձելու եմ, այլ ես ունեմ անկախ գործելու իրավունք, քանի որ Սահմանադրության մեջ ամրագրված է, որ մարդու իրավունքների պաշտպանը կախված չէ որեւէ մարմնից կամ պաշտոնատար անձանցից: Պաշտպանի պարտականություններին խոչընդոտելը, նրան սպառնալը քրեորեն պատժելի են:

- Ո՞րն է լինելու Ձեր առաջին անելիքը:

- Նախ, մտածում եմ աշխատակազմի մասին, որոնց հետ համատեղ պիտի աշխատենք: Եւ ուզում եմ այնպիսի մարդկանց հավաքեմ, որոնք կլինեն ազնիվ, պրոֆեսիոնալ, բարեխիղճ, անաչառ: Այնքան համարձակություն ունենան, որ, երեւան հանելով կոնկրետ պաշտոնատար անձի կողմից թույլ տրված խախտումը՝ ձեռնարկեն համապատասխան միջոցներ:

- Իսկ Դուք ունե՞ք ձեր թվարկած հատկանիշները:

- Ըըը... Ես հուսով եմ, որ այն պատգամավորները, որոնք քվեարկել են իմ օգտին այս պաշտոնում նշանակվելու համար, տեսել են իմ մեջ այդ ամենը: Բացի դրանից, ես ունեմ բավականին մեծ փորձ, որը ինձ թույլ կտա այս դաշտում աշխատել:

- Կարո՞ղ եք մատնանշել մեկ ոլորտ, որտեղ կան ակնհայտ խախտումներ:

- Նման ոլորտ նշել չեմ կարող: Ոչ թե զգուշանում եմ կամ թաքցնում, այլ պարզապես եթե լիներ, ես ձեզ հետ հարցազրույց տալու փոխարեն կզբաղվեի այդ խնդրով:

Լուսինե
ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ